№ 222 ՈՒՐԲԱԹ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 10 — 1903 — ՈՒՐԲԱԹ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 10 № 222

ԵՐԵՍՈՒՆՄԷԿԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, Редакція «Мшакъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տէլէֆօն № 258.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի եւ տօն օրերից).

Յայտարարութիւն ընդունվում է ամէն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.
Տէլէֆօն № 258.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Տեսակ աչխատանք. — ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Հայկական բեմը գաւառներում. Մեր իրականութեան կաօրներից. Նամակ Ջիբրայիլի գաւառից. Նամակ Սուրմալուի գաւառից. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Հեռաւոր Արեւելքում. Ինչ է կատարվում Մակեդոնիայում. Նամակ Գարակալանից. Արտաքին լուրեր.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ՅԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Նամակ Աբիսինիայից.

ՏՈԿՈՒՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Մենք առիթ ունեցանք լսելու մի քանի վհատված անձերի գանգատներ այս կամ այն անտեսական և հասարակական ձախորդութիւնների մասին և տեսանք, որ կուլտուրական դիմացկանութիւնը դեռ թոյլ է մեզանում։ Եթէ այսօր ձեզ չաջողվեց մի նոր արդիւնաբերութիւն կազմակերպելու, մի խնայողական և սպառող ընկերակցութիւն բանալու և պահպանելու, մի դրամարան հիմնելու, մի հրատարակչական գործ ապահովելու, այդ դեռ չէ նշանակում, թէ պէտք է յուսահատվել, ձեռքերը ծալել կամ ասպարէզից քաշվել հեռանալ և կուլտուրական հոգատարութիւնը մի կողմը դնել։

Յուսահատութիւնը—բացասական յատկութիւն է, կորստաբեր՝ կուլտուրայի համար։ Յուսահատութեամբ առաջ գնալ չէ կարելի։ Ոչ մի տեղ այնքան մեծ անանկութիւններ, այնքան մեծ ձախողութիւններ տեղի չեն ունեցել, որքան Եւրոպայում և սակայն ոչ մի տեղ և ոչ մի ժամանակ քաղաքակրթութիւնը այնքան մեծ զարգացում չէ ստացել, որքան Եւրոպայում, ինչո՞ւ։ Որովհետև Եւրոպան իր ազգարնակութեան մեծամասնութեամբ ոչ միայն չէ յուսահատվում, այլ օրէցօր աւելի ու աւելի մեծ խուսնդով ու հնարագիտութեամբ ճգնում է մաքառել իրան խոչընդոտ հանդիսացող ձախորդ պայմանների դէմ և հարթել իր անտեսական և կուլտուրական ձեռնարկութիւնների համար զարգացման ճանապարհ։

Այն, ինչ որ չէ աջողվում այսօր, նա կաջողվի վաղը և միւս օր։ Այն արդիւնաբերութիւնը, որ այսօր միայն վնասներ է տալիս, վաղը կը դառնայ ժողովրդի հարստութեան աղբիւր, այն ընկերակցական կազմակերպութիւնը, որ այսօր պահպանվում է արհեստական միջոցներով, վաղը ինքան կը կազդուրվի և ոտքի կը կանգնի, որ կը դառնայ կեանքի անհրաժեշտ գործոններից մէկը։ այն հասարակական ձեռնարկութիւնը, որի համար այսօր զոհաբերութիւններ են հարկաւոր, վաղը ինքը իր միջոցներով կապահովէ ուրիշ հանրօգուտ ձեռնարկութիւններ։

Միայն թէ չը պէտք է վհատվել առաջին անաջող քայլերից և լի հաւատով ու յոյսերով առաջ տանել կուլտուրական առաջադիմութեան գործը։ Նոյն իսկ մեր երկրի մէջ մենք ունենք բաւական համոզեցուցիչ օրինակներ, որ այն, ինչ որ մի քանի տասնեակ տարի սրանից առաջ անաջող և երերուն մի ձեռնարկութիւն էր, այսօր դարձել է բոլորվին աջող և հաստատուն մի գործ, որ դարձել է մեր նորագոյն կեանքի սեփականութիւն և այլ ևս չէ պահանջում ոչ մի կողմնակի նպաստ իր գոյութեան և զարգացման համար։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ԲԵՄԸ ԳԱՒԱՌՆԵՐՈՒՄ

Որքան ուրախալի է այն երեւոյթը, որ վերջին տարիներում հայերիս մէջ թատրոնական գործը սկսում է տեղ-տեղ հաստատուն հիմքերի վրա դրվել, ինչպէս, օրինակ, Թիֆլիսում և Բաքուում, այնքան դժուալի է, որ գաւառներում այդ գործը համարեա ոչ մի առաջադիմութիւն չէ անում և գաւառները մեծ մասամբ, համարեա ամբողջ տարվայ ընթացքում զուրկ են մնում հայերէն ներկայացումներից։ Եթէ չը հաշուենք Թիֆլիսի դերասանական խմբի ամառային մի քանի շրջագայութիւնները գաւառներում, կարելի է համարձակ ասել, որ գաւառացի հայը, որն աւելի կարիք ունի համմնման կրթիչ հասատութիւնների, թատրոնական գործում չատ անտեսանելի վիճակի մէջ է գտնվում։

Եթէ գաւառները իրանց յոյսը դնեն միայն վերոյիշեալ խմբի վրա, որը միանգամայն անկարող է այդպիսի մեծ կարիքին բաւարարութիւն տալ և չաչխատանի տեղական ոյժերով թատրոնական գործը զեկավարել, եթէ գաւառներում երեւան չը գան թատրոնական գործի ինքնուրոյն նախաձեռնողներ, որոնք կազմելով սիրողների կանոնաւոր և մշտական խմբեր, աչխատէին հնարաւոր եղածի չափով բաւարարութիւն տալ հայկական թատրոնի պահանջին, ապա գաւառները դեռ երկար ժամանակ զուրկ կը մնան հայերէն ներկայացումներից։

Ճիշդ է, թէև գաւառներում տեղ-տեղ տրվում են սիրողների ներկայացումներ, սակայն դրանք պատահական երեւոյթներ են և պահանջի հետ համեմատած չատ չնչին, ամենան են, մինչդեռ անհրաժեշտ է գաւառներում ևս հայոց բեմական գործը հաստատուն հիմքերի վրա դնել։ Այդ պատահական ներկայացումներն իսկ ամէն տեղ ապացուցանում են, թէ թատրոնը գաւառացի հայի համար էլ ուղղակի կենսական պահանջ է դառնում, նա միչտ գրաւում է գաւառացի հային, երբ նախաձեռնողները ժողովրդին տալիս են մատչելի նիւթեր և բարեխղճաբար են վերաբերվում իրանց ստանձնած համակրելի գործին։

Ցաւալի է խոստովանել, որ նոյն իսկ այնպիսի հայաչատ քաղաքներ, ինչպէս՝ Երեւան, Ալէքսանդրապոլ, Նոր-Նախիջեւան, Ատրպատական, Սիմֆերոպոլ և այլն, զուրկ են թէկուզ սիրողների մշտական ներկայացումներից։ Մինչդեռ մենք աւելի քան հաւատացած ենք, որ գաւառներում, ամենայն տեղ, եթէ տեղական երիտասարդ սերունդը մի քիչ սթափվէր իր անտարբերութիւնից և հասարակական կարիքները իր օրէնն մօտ ընդունէր, ապա անանխանձելի վիճակի մէջ չէր լինի ոչ միայն թատրոնական գործը, այլ և չատ ուրիշ հասարակական գործեր, որոնք ներկայումս երեսի վրա են ընկած։

Անկասկած թատրոնական գործը չատ պատասխանատու գործ է և մանաւանդ գաւառներում։ Նա կարող է պատահել բազմաթիւ խոչընդոտների, սակայն միչտ պէտք է աչքի առաջ ունենալ, որ այդ գործը պէտք է ստանձնեն որոշ չափով պատրաստված և ձեռնհաս անձինք, որոնք պէտք է լուրջ ուշադրութիւն դարձնեն թէ բեմադրատարի վրա, տալով ժողովրդին նրա մասնաւոր պատրաստութեան համապատասխան պիեսներ, թէ դերերի յարմար բաժանման և թէ առհասարակ թատրոնական գործը խելացի կերպով առաջ տանելու վրա։ Հակառակ դէպքում ժողովուրդը բաւականութեան տեղ միայն ձանձրոյթ և անբաւականութիւն կը ստանայ և գործի զեկավարները նպաստելու տեղ աւելի վնասած կը լինեն թատրոնական գործին։

Ատրպատական. Խանջամիրի

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՆԱՄԱԿ ԱԲԻՍԻՆԻԱՑԻՑ

Աթիսաբաբա, օդոստոսի 17-ին

Տեղւոյս հայ գաղթականաց ընդհանուր թիւը արս. էգ, երեխայ ի միասին հաշուելով կը հասնի 56-ի. այս թիւի մէջ պէտք է հաշուել երկու նորեկ գաղթականներ՝ Գօղոս աղէ Մարհարեանի եղբօրորդին, պ. Դաւիթ Մարգարեան և Գէրպէրեան վարժարանի ընթացաւարտներէն պ. Միհրդատ Թերզոնց, որոնք երկամեայ ուղևորութենէ վերջ նախընթաց օր քաղաքս ժամանեցին։ Հապէշիստանի մէջ գտնուող հայերը ուրիշ ազգաց գաղթականներէն աւելի վստահութիւն և յարգ կը վայելեն Մենելիք կայսեր և իր կառավարութեան մօտ այն պարզ և հասկնալի պատճառով, որ հայերուն եւեն Եւրոպացի գաղթականներուն նման քաղաքական ազդեցութիւններ չեն շարժիր։ Եւ դարձեալ այս պատճառով է, որ ձգտում մը կայ կայսեր մօտ քաղաքական ազդեցութիւն և հետեւութիւններ ունեցող պաշտօնները հայերուն յանձնելու և հեղինեակ հայոց առաջնակարգ դիրք մը տալու միւս ազգաց գաղթականներուն վրայ։ Այսպէս մի քանի հանգերու շահագործման մասին ընկերութիւն մը կազմելու՝ ինչպէս նաև ուղղամիտերքի գործարան մը հիմնելու կարևորագոյն գործերը յատուկ հրովարտակով յանձնուեցան ծանօթ վաճառական պ. Սարգիս Թերզեանի, և մեծ հաւանականութիւն կայ, որ կայսերական փոխարքունոցի ընդհանուր անօրէնութիւնը յանձնուի նոյնպէս հայու մը, պ. Յակոբ Գաղդարեանի, որ անցեալ տարի կայսեր հրամանաւ ուղևորեցաւ Եւրոպա փոխարքունոցին յատուկ մեքենաներ և գործիքներ բերելու համար և իրեն յանձնուած պաշտօնը ամենայն հոգածութեամբ և իզմտութեամբ կատարելով, արժանացաւ Մենելիք կայսեր բարձր գնահատումին և գոհունակութեան։

Հաբէշիստանէն կարդ մը թղթակցութիւններ երեցած են հայ թերթերուն մէջ, բայց այդ թղթակցութեանց մէջ ոչինչ ըսուած չէ հայ գաղթականներուն անձնական-ընկերական յարաբերութեանց մասին։ Կարժէ կարծեմ այդ մասին փոքր ինչ տեղեկութիւն տալ։ Հաբէշիստանի և գլխաւորապէս Աթիսաբաբայի հայերը գաղթած են Գօղէն և Թիւրքիոյ զանազան գաւառներէն՝ Ակնէն, Ատրպատականէն, Նիկոմիդիայէն։ Գարսիդակէն, Վանէն, Տիգրանակերտէն, Ատանէն, Սեբաստիայէն և առաւելաբար Արաբկիրէն։ Եւ իւրաքանչիւր գաղթականի իր միջավայրի բարքերը, սովորութիւնները, ասանդութիւնները իւրացուցած, տարբեր խառնուածքի տարբեր նկարագրի տէր է իր միւս այլազգատոհմի ազգակցէն, և ասկէ իրենց միջև կարծիքներու, համոզումներու հակադրութեան արմատական տարբերութիւն մը որ խորապէս ազդած է իրենց անձնական ընկերական յարաբերութեանց վրա։ Չի կայ հայ մը, որ ուրիշ հայու մը ընթացքին գործին հաւանի և չը քննադատէ, չի կայ հայ մը, որ ուրիշ հայու մը աջողութեան վրա ուրախանայ և կամ այդ աջողութեան նպաստէ՝ եթէ ոչ նիւթապէս, գէթ բարոյապէս, վերջապէս չի կայ հայ մը, որ ուրիշ հայու մը հետ անկեղծօրէն կապուած լինի։ Հետեւաբար, բացի մի գովելի և օրինակելի երեւոյթ, զոր ի պատիւ տեղւոյս հայ գաղութին ուրախութեամբ պիտի յիշատակենք այս գրուածքին վերջին հատուածին մէջ, ոչինչ չի կայ նախանձելի իրենց անձնական ընկերական յարաբերութեանց մէջ։ Ընդհանրապէս տարին տասն անգամ կը կռուին, հինգ անգամ կը հաշտուին. ինչու՞ չատ կը կռուին և քիչ կը հաշտուին—պիտի բացատրեմ քիչ մը վերը։ Եթէ իրենց կեանքը անկեղծ է, իրենց հաշտութիւնը անկեղծ չէ։ Կը հաշտուին՝ նորէն կռուելու համար, կը կռուին նորէն հաշտուելու համար։ Հաշտութեան հանդիսաւոր և պաշտօնական օրերն են ընդհանրապէս Մնունդը, Զատիկը և բոլոր ազգային մեծ օրերը։ Ու հաշտութեան պաշտօնական միջոցներն է շամբանիան. առանց շամբանիայի հաշտութիւն չըլլար, ասանց հաշտութեան ալ շամբանիա չըլլար։ Շամբանիան ամէն երկրէ աւելի այս տեղի հայոց մէջ մեծ և օգտակար դեր կը խաղայ, հաշտարար նեկտարն է այն, որ առժամապէս կը մարէ կիրքերը և զոր կատ նեկտարը՝ օղին կը վերարծարծէ։

Նուիրագործեալ սովորութիւն մէ այսպէս՝ ով որ կուզէ հաշտուիլ, պէտք է անպատճառ շամբանիա խմէ, և ով որ կուզէ կռուիլ, պէտք է անպատճառ օղի խմէ, և որովհետև օղին աւելի աժան է, քան թէ շամբանիան, այսինքն կռիւը աւելի աժան է, քան թէ հաշտութիւնը, այդ պատճառով աւելի կը կռուին, քան թէ կը հաշտուին։ Անաւասիկ այդ պատճառաւ էր, որ վերը ըսի, թէ եթէ տարին տասն անգամ կռուին, միայն հինգ անգամ կը հաշտուին։

Օր մը ըսի ծանօթի մը՝ ինչու համար չարունակ կը կռուիք, մի քանի հայեր էք, չէք կրնար խաղաղութեամբ ապրիլ, ինչ ունիք չարունակ կռուելու։ Ի՞նչ պիտի ընենք, պատասխանեց, ասա՛ փուռ նատինք՝ ձաթինք պիտի՞, ալ լոնցի համոզուելով կատարելապէս, թէ այստեղ չի ձաթելու համար պէտք է անպատճառ կռուիլ։ Անցեալ տարի հայ մը երբ երկար ուղևորութենէ վերջ քաղաքս վերադարձաւ իր առաջին խօսքն եղաւ, ասա՛ ինչ է. ձայն ձուն չը կայ, մեռեր էք, պէ՞, ինչ էք ե՞ղեր՝ քիչ մը իրար չանցնիք։ Իրաւ ալ քանի մը օր վերջ այնպիսի իրարանցում մը հանեց, որ շաբաթներ տեսնց։ Ուրիշ մը, որ հիմա Հաբէշիստանի մէկ քաղաքն կը գտնուի կարևոր գործով մը, բան ու գործ թողած մի քանի օր առաջ հեռագրաւ կը հարցնէ իր մէկ բարեկամին թէ՝ «ինչպէս էք, ողջ էք, թէ մեռած», այսինքն կը կռուիք թէ հանդարտ էք, և այդ բարեկամը երբ կը պատասխանէ, թէ հանդարտ ենք, իսկոյն երկրորդ հեռագիր մը կուտայ, թէ «վաղը ճամբայ կելլամ կոր»... Հետեւաբար ի մօտոյ քաղաքս կը սպասուի այդ պարոնը և իրեն հետ մէկ տեղ ալ մեծկակ իրարանցում մը։

Այս տողերը կարդացողը ի հարկէ բոլորովին աննպատակ եզրակացութեան մը պիտի յանգի տեղւոյս բոլոր հայերու մասին, բայց պէտք է գիտնալ, թէ այս տողերով կանխակռուն ոչ թէ ամենքը հաւասարապէս, այլ մեծամասնութիւնը հայ գաղութին, ուր շատ հաղուագիւտ և յարգելի բացառութիւն մը կը կազմէ փոքրամասնութիւնը։

Եթէ քաղաքիս հայերուն յուսեցոյն կողմերը ցոյց տուի ամենայն անկեղծութեամբ, կարժէ որ իրենց լաւագոյն կողմերն ալ ցոյց տամ մի և նոյն անկեղծութեամբ։ Նախ որ չը նայած իրենց նիւթական համեստ վիճակին որ և է հանրօգուտ գործի համար չեն խնայած իրենց դրամը իրենց կարողութենէն շատ աւելի նուիրելով և մրցելով մէկզմէկու հետ աւելի տալու մէջ։ Սրկրորդ հայերու մէջն ծագած բարոյ ընկերական և տնտեսական վէճերը դարձեալ կը կարգադրուին հայկու ձեւերով։ Նոյնս մը տնտեսական և ընկերական անհամաձայնութիւններ հայ գաղութի ընդհանուր ժողովը քննած վճռած է, համաձայնութեան բերելով երկու հակառակորդ կողմերը, թոյլ չը տալով, որ դատարաններու առջև քաշվեն, մեծամեծ ծախսերու ենթարկուին և տուէր ձգեն տոհմային արժանապատուութեան վրա։ Այս տողերը, որ պատիւ կը բերեն հայ գաղութին, կը հիմնարձակինք յանձնարարել ուշադրութեան ուրիշ բոլոր հայ գաղթականութեանց և ի մասնաւորի եւրոպական զարգացեալ կեդրոններու տալայատակներ չափող մեր կարդ մը լիք պարոններու ուշադրութեան, որոնք չի նայած իրենց կրթութեան և միջավայրին, ասար դատարաններու առջև իրար կը խայտառակեն, մոռանալով իրենց անհատական և ազգային արժանապատուութիւնը։

Հ.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ԲԵՄԸ ԳԱՒԱՌՆԵՐՈՒՄ

Որքան ուրախալի է այն երեւոյթը, որ վերջին տարիներում հայերիս մէջ թատրոնական գործը սկսում է տեղ-տեղ հաստատուն հիմքերի վրա դրվել, ինչպէս, օրինակ, Թիֆլիսում և Բաքուում, այնքան դժուալի է, որ գաւառներում այդ գործը համարեա ոչ մի առաջադիմութիւն չէ անում և գաւառները մեծ մասամբ, համարեա ամբողջ տարվայ ընթացքում զուրկ են մնում հայերէն ներկայացումներից։ Եթէ չը հաշուենք Թիֆլիսի դերասանական խմբի ամառային մի քանի շրջագայութիւնները գաւառներում, կարելի է համարձակ ասել, որ գաւառացի հայը, որն աւելի կարիք ունի համմնման կրթիչ հասատութիւնների, թատրոնական գործում չատ անտեսանելի վիճակի մէջ է գտնվում։

Եթէ գաւառները իրանց յոյսը դնեն միայն վերոյիշեալ խմբի վրա, որը միանգամայն անկարող է այդպիսի մեծ կարիքին բաւարարութիւն տալ և չաչխատանի տեղական ոյժերով թատրոնական գործը զեկավարել, եթէ գաւառներում երեւան չը գան թատրոնական գործի ինքնուրոյն նախաձեռնողներ, որոնք կազմելով սիրողների կանոնաւոր և մշտական խմբեր, աչխատէին հնարաւոր եղածի չափով բաւարարութիւն տալ հայկական թատրոնի պահանջին, ապա գաւառները դեռ երկար ժամանակ զուրկ կը մնան հայերէն ներկայացումներից։

Ճիշդ է, թէև գաւառներում տեղ-տեղ տրվում են սիրողների ներկայացումներ, սակայն դրանք պատահական երեւոյթներ են և պահանջի հետ համեմատած չատ չնչին, ամենան են, մինչդեռ անհրաժեշտ է գաւառներում ևս հայոց բեմական գործը հաստատուն հիմքերի վրա դնել։ Այդ պատահական ներկայացումներն իսկ ամէն տեղ ապացուցանում են, թէ թատրոնը գաւառացի հայի համար էլ ուղղակի կենսական պահանջ է դառնում, նա միչտ գրաւում է գաւառացի հային, երբ նախաձեռնողները ժողովրդին տալիս են մատչելի նիւթեր և բարեխղճաբար են վերաբերվում իրանց ստանձնած համակրելի գործին։

Ցաւալի է խոստովանել, որ նոյն իսկ այնպիսի հայաչատ քաղաքներ, ինչպէս՝ Երեւան, Ալէքսանդրապոլ, Նոր-Նախիջեւան, Ատրպատական, Սիմֆերոպոլ և այլն, զուրկ են թէկուզ սիրողների մշտական ներկայացումներից։ Մինչդեռ մենք աւելի քան հաւատացած ենք, որ գաւառներում, ամենայն տեղ, եթէ տեղական երիտասարդ սերունդը մի քիչ սթափվէր իր անտարբերութիւնից և հասարակական կարիքները իր օրէնն մօտ ընդունէր, ապա անանխանձելի վիճակի մէջ չէր լինի ոչ միայն թատրոնական գործը, այլ և չատ ուրիշ հասարակական գործեր, որոնք ներկայումս երեսի վրա են ընկած։

Անկասկած թատրոնական գործը չատ պատասխանատու գործ է և մանաւանդ գաւառներում։ Նա կարող է պատահել բազմաթիւ խոչընդոտների, սակայն միչտ պէտք է աչքի առաջ ունենալ, որ այդ գործը պէտք է ստանձնեն որոշ չափով պատրաստված և ձեռնհաս անձինք, որոնք պէտք է լուրջ ուշադրութիւն դարձնեն թէ բեմադրատարի վրա, տալով ժողովրդին նրա մասնաւոր պատրաստութեան համապատասխան պիեսներ, թէ դերերի յարմար բաժանման և թէ առհասարակ թատրոնական գործը խելացի կերպով առաջ տանելու վրա։ Հակառակ դէպքում ժողովուրդը բաւականութեան տեղ միայն ձանձրոյթ և անբաւականութիւն կը ստանայ և գործի զեկավարները նպաստելու տեղ աւելի վնասած կը լինեն թատրոնական գործին։

Ատրպատական. Խանջամիրի

ՅԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Յայտարարութիւն ընդունվում է ամէն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.
Տէլէֆօն № 258.

ՄԵՐ ԻՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԿՏՈՐՆԵՐԻՑ
(Նամակ Բազուից)

—

Ծանր թոշէներ էին ինձ վիճակված. կիրակի, հոկտեմբերի 5-ին, Երեխաների խնամատար ընկերութեան ընդհանուր ժողովն էր. ես դատապարտված էի, ինչպէս անդամ այդ ընկերութեան, լսել և, ինչպէս քարտուղար այդ ժողովի, արձանագրել մի շարք զառն իրողութիւններ։ Ես գիտէի ինչի համար էին հրաւիրված ընկերութեան անդամները։

Գաղտնական ծանուցագիրը ասում էր իր սովորական, շարլոն «հաշիւները քննել և վաւերացնել ու հաստատել նախահաշիւը»։ Բայց խնդիրը դրանում չէր. ընկերութիւնը ծանրաբեռնված է բազմաթիւ հոգսերով, վարչութիւնը, իրանից անկախ պատճառներով, հնարաւորութիւն չէ ունեցել նախկին տարվայ հաշիւը տարվայ սկզբին ներկայացնել գործը ընթացել է իր կարգով և այսօր ընկերութեան դրամարկղում կայ 250 ր. կանխիկ փող, 400 ր. պարտք, անորոշ ներկայ, մութը ապագայ, մի քանի հարիւր քաղցած և մերկ երեխաներ և ընկերութեան մի քանի հաստատութիւններ, որոնց մէջ արհեստներ և գրագիտութիւն էին սովորում այդ երեխաները։

Ընկերութեան վարչութիւնը տարվայ ընթացքում, ինչպէս ասում են, մի քանի անգամ հաստատութեան ատենագրի քաշեց. տեղական լրագիրներում պարբերաբար տեղեկութիւններ էին տպվում վարչութեան անուանից գործի անհամանձնի վիճակի մասին։ Խմբագրութիւնները իրանց կողմից յօդուածներ էին նուիրում, կոչ էին անում հաստատութեանը ուշք դարձնելու այդ ասելի քան կարեւոր և օգտակար բարեգործական ընկերութեան վրա։

Բազում, այս համաշխարհային քաղաքում, անտէր երկրում ճնչվածի, զրկվածի, «քեռաբիր» դրութիւնը շատ անպաճոյճ է։ Այդ դատակարգի երեխաները, փոքր հաստատութեան այդ լեգէոնը, փողոցի այդ հրաւաքատ և հաստատութեան խորթ զաւակները բացառութիւն չը պիտի կազմեն և չեն էլ կազմում։ Ամեհի վիշապի նման, այդ «փողոց» կոչված հրէշը անխնայ կերպով կլանում է և կամ բոլորովին, կամ միանգամայն այլանդակում է այդ անպաշտպան, թոյլ արարածներին։ Ահա այդ փողոցի մէջ բուսել է մի ընկերութիւն, որի անդամները միմիայն 3 ր. պիտի վճարեն. գոյութիւն է տացել մի հաստատութիւն, որը մի երեխային ամբողջ 30 օր, մի ամիս, լաւ կշտացնում է 60 կոպէկով և իւրաքանչիւր ուսնեար (?!), լսեցէք, 60 կոպեկանոց ունեար, մի ամսով կը կշտացնէ մի երեխայի։

Գէաք է կարծել, որ կը գտնվեն «մի քանի հազար այդպիսի ունեորներ», և մի քանի հարիւր դէթ անդամներ (երեք բուբլի վճարելու համար)։ Բայց ինչ ենք տեսնում. առաջի տեսակի ունեորների թիւը հասնում է մօտ 500, իսկ երկրորդ տեսակի ունեորների թիւը ճիշդ 146 է։ Զէք հաւանում, չէք մխիթարվում, ընթերցող, նոյն իսկ Բազուից շատ հեռու ապրող ընթերցող։

Բազուի հաստատութեան առջև դրված է ընկերութեան լինել կամ չը լինելու հարցը։ Բազուի հպարտ հաստատութեան ճակատից կախված 8 ր. և 60 կ. խայտառակ հարցը։ Ընկերութեան անդամները հեռանալ կիրակի օրվայ և միւս, դուցէ արտակարգ ժողովներում, վճռելու են այդ հարցը, լինել չը լինելու խայտառակ հարցը։ Ի՞նչ ասեն այդ ընկերութեան անդամները, ինչ վճռեն։ Երկու հարիւր հազարի չափ բնակչութիւն ունեցող քաղաքի 146 անդամների փոքրաթիւ ներկայացուցիչները եթէ փակեն այդ ընկերութիւնը, մի ոճիր գործած չեն լինի արդեօք, թէև այդ ոճիրը արդարացնվելիս լինի իրաւաբանական և բարոյական բոլոր ինստանցիաներում։

Ուշ չէ, և այդ հարցը առաջարկում ենք Բազուի հաստատութեանը։ Ամառան 206 քաղցած երեխաներից 100 հայեր են, այս էլ ենք հրապարակի վրա դնում։

Բազու. Ռ. Յովհաննէսեան

ՆԱՄԱԿ ՍՈՒՐՄԱԼՈՒԻ ԳԱՒԱՌԻՑ

—

Իգդիր, հոկտեմբերի 4-ին

Սեպտեմբեր ամիսը վերջացաւ. եղանակը զգալի կերպով հովացել է, բայց Սուրմալուի գաւառի դաշտային մասը շարունակում է մի ընդարձակ հիւանդանոց մնալ։ Մալարիայի կատաղել զարգացումն էր այս տարի, որը ժողովրդին ահագին վնաս պատճառեց նիւթապէս և ֆիզիքապէս. ընտանիք չը կայ, որ մի քանի հիւանդներ չունենայ։ Վերոյիշեալ հիւանդութիւնը անցեալ տարի սկսվեց Արեաջ գիւղում (Մասիսի տակ). այդտեղ գոյութիւն ունի մի մշտական ճահիճ, որը չը մոռանանք ասել՝ պատկանվում է համարեա արհեստական կերպով, և որը շատ հեշտութիւնով կարելի է չորացնել։

Եթէ, յիրաւի, բժ. Կոնի փորձերը՝ պատուաստ մալարիայի դէմ, ազդվում է, անհրաժեշտ է Կովկասի բժիշկներին առանձին ուշադրութիւն դարձնել բժշկութեան այդ եղանակի վրա։

Չը նայած որ Սուրմալուում հացահատիկների հունձը սկսվում է յունիսի վերջերին, բայց հարիւր ժողովուրդը այս տարի կարողացաւ վերջացնել սեպտեմբեր ամսի վերջերին, այն է երեք ամսվայ ընթացքում, որի ուշանալու գլխաւոր պատճառը ժողովրդի հիւանդութիւնն էր։ Երկրագործական աշխատութեան շատ վնասեց նաև լեռնային և կիսան անասունների մէջ տարածված նոյնպէս վարակիչ «դաբաղ» (եայշուր) կոչված հիւանդութիւնը, որի պատճառով կորվել էր հաղորդակցութիւնը և կանգ էին առել գաշտային շատ տեսակ աշխատութիւններ։

Այս տխուր դրութեան մէջ մխիթարական էր նարաւարտ բժիշկ պ. Սպանդարատ Կամսարականի ներկայութիւնը իր հայրենի Բլուր գիւղում. նա իր ձրի օգնութիւնը չէր խնայում ոչ օրից, ինչ ժամանակ և ումն էլ լինէր, նրան համարեա հարատևարում էր մեր ձրիաբեր ժողովուրդը. եղել են դժգոհութիւն յայտնողներ ևս, որ բժ. պ. Սպանդարատը ձրի բժշկելուց դուրս՝ դեղերի արժէքն էլ իր գրպանից չէ վճարել...

Հողի բերքն էլ այս տարի սատակ պակաս է։ Ցորեն ստացվել է մէկին 2—3, լեռնային մասում քիչ աւել, մէկին չորս և աւել ստացողը բացառիկ երևոյթ է։ Բամբակը նոյնպէս շատ վատ է, Ղարաղովան համարեա բերք չունի, միջակից էլ վատ է, ամերիկական տեսակը կարող է այս տարի միջակ բերք տալ, որից դժբաղդաբար քիչ է ցանված այս տարի, սակայն ընդհանրապէս այս տարի ասելի շատ ստրածութեան վրա է բամբակ ցանված անցեալ տարվանից։

Գարաը եմ համարում առանձնապէս չնշել, որ այս տարի բոլոր գժբաղդութիւնների մէջ ժողովուրդը մխիթարվեց նորընտիր միրաւ (ջրպետ) Աղաբէգ Մամմադղուլի բէգ օղլու վերին ատաքնամի բարեխիղճ և արդարատէր վարմունքից, որը իր նախորդ՝ Ալի Բայթալ Ռահիմ օղլու կատարեալ հակապատկերն է ներկայացնում։ Ջրերի ամենապակաս ժամանակն իսկ ոչ ոք չը նեղվեց, ոչ մի անկանոնութիւն տեղի չունեցաւ, մոռացվեց կաշառակերութեան գաղափարը, որը մի տարի առաջ խիստ զարգացած էր։ Ներկայ միրաւի կողմից ոչ մի բողոք չը մատաւ դատարան, որը առաջ անթիւ էր. ոչ ոք չը բանտարկվեց կամ տուգանքի չենթարկվեց։

Ամենը օրհնում են նրա կեանքը։

Սակայն ցաւելով ստիպված եմ յիշել, որ նա հրաժարվում է պաշտօնից. յուսով ենք, որ ժողովուրդը լիովին կը յայտնէ իր երախտագիտութիւնը նրան նորից վերընտրելով կամ մի արժանի յաջորդ տալով։

Ց. Խօջաէյնաթեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Թիֆլիսի նահանգապետի դիւանատունը խնդրում է ոստիկանապետին և գաւառապետներին միջոցներ ձեռք առնել, որքան հնար է, մանրամասն տեղեկութիւններ տարածելու ազգաբնակութեան մէջ և առանձնապէս արդիւնաբերների շրջանում Հիւսիսային Ամերիկայի Միացեալ Նահանգների Ս.-Լուի քաղաքում տեղի ունենալիք համաշխարհային ցուցահանդէսի մասին, որին Ռուսաստանը մասնակցում է պաշտօնական կերպով։ Ցուցահանդէսի վարչութիւնը ձրիաբար տալիս է էկսպօնենտներին տեղեր ցուցադրելի առարկաների համար, էլեկտրական լուսաւորութիւն և շարժող ոյժ, իսկ էկսպօնատները տեղափոխելու, վիտրիններ և պավիլիօններ տարելու ծախսերը ցուցահանդէսին մասնակցողները պէտք է յանձն առնեն իրանց վրա։ Ցուցադրելի այն առարկաներին, որոնք արդիւնք են մանուֆակտուրեան, կը տրվեն ամենալայն չափերով արտօնութիւններ, իսկ մասին ապագայում կը ասեմ մի նոր արտօնում տարիք այդ առարկաները հիւսիսային Ամերիկա տեղափոխելու համար։ Ցուցահանդէսի կազմակերպող կենտրոնական կոմիտէն, բացի սրանից, մտադրութիւն ունի, էկսպօնենտների գործը հեշտացնելու համար, չինել վիտրիններ և այլ կարեւոր չինութիւններ ու տալ նրանց ցանկացողներին որոշ վարձատրութեամբ։

—

Երէկ, հոկտեմբերի 9-ին, Բաթումից Թիֆլիս հասան 45 տուրիստա—անգլիացիներ, որոնք Լէնդոնից եկել են Բաթում «Արգոնավտ» շոգենաւով։ Տուրիստա—անգլիացիների նպատակն է շրջել Կովկասի զանազան տեղերում և ծանօթանալ մեր երկրի նշանաւոր վայրերի հետ։

—

Շաբաթ օրը, հոկտեմբերի 8-ին, Թիֆլիսի սանիտարական բժշկական տեսուչը ներկայացրեց քաղաքային ուղղավարչին մի զեկուցում, որով առաջարկվում է ծննդական տպատարաններ չինել քաղաքի զանազան մասերում։ Այս զեկուցումը, որ մշակված է սանիտարա-կան-բժշկական խորհրդի անդամ կին-բժիշկ Իսահակեանի ժողովված փաստերի հիման վրա, արդէն ընդունված է այդ խորհրդի մէջ տպատարանների չինութեան ծրագրի հետ միասին։

—

«Արեւելեան Մամուլ» շաբաթաթերթի այս տարվայ № 39-ի մէջ կարդում ենք. «Վերին ցաւով կարձանագրենք Գոյսոյ հայ բժշկական դասուն ամենէն նշանաւոր և ամենէն փայլուն անդամին՝ Տօքթ. Միքայել էֆ. Խորասանճեանի զարմանալի մահը, որ տեղի ունեցած է նախորդ շաբթու մէջ՝ կաթուածի մը բուռն հարուածին հետեւանօք և որ իւր տպաւորութիւն թողած է մայրաքաղաքի ամէն դասակարգի ազգաբնակ և օտարազգի հասարակութեանց վրա։ Ողբացեալ բժշկապետին յուղարկաւորութիւնը կատարուեր է անցեալ չորեքշաբթի, 17 Սեպտ., իր անուան և համբաւին արժանի հանդիսաւորութեամբ և ի ներկայութեան պետական բարձրաստիճան պաշտօնատարաց և բազմաթիւ հայ և օտարազգի յուղարկաւորաց։ Հանգուցեալը 30 տարիի չափ դասախօսած է Կայսր. բժշկական վարժարանին մէջ և տուրքան գնահատելով անոր կարողութիւնը՝ Արքունեաց բժիշկ անուանված էր զայն։ Օգտակար ծառայութիւններ մատուցած է նաև Ազգ. Հիւանդանոցին. ունէր Ա. կարգի Մէճիտիէ և Բ. կարգի Օսմանիյէ պատուանշանները և Լիազարի ու Իմթիազի ոսկի չքադրամները։ Ողբացեալ բժշկապետ Խորասանճեան իր բժշկական արուեստին մէջ ունեցած խորին հմտութեամբ, տաղանդով, իր ազնուական բնաւորութեամբ և մանաւանդ իր անշահախնդիր և մարդասէր նկարագրով անհուն ժողովրդականութիւն մը շահած էր և գրեթէ համաշխարհիկ հմտաբանը։ Իր մահը արդարև արդարամտի կորուստ մըն է որուն հանգէպ ուրիշ բան չմնար մեզ, բայց միայն խորապէս վշտակցիլ իր ազակիր ընտանեաց և երթալով մխիթարութիւնը մաղթել իրենց՝ այս դառնակսկիծ մահուան առթիւ։

—

Չորեքշաբթի, հոկտեմբերի 8-ին, Հաւլաբարի Թատրոնում խաղացվեց «Ճարագրոծի ընտանիքը» դրամա 5 գործ. հեղինակութիւն Զիակօմէտթի։ Գիրքը թէև հին, բայց հետաքրքիր է և վերցրած է իսալական կեանքից։ Գ. Աբելեան Գօրրադօի դերում շատ լաւ էր և ներկայացրեց ընտրոյթ տիպ. մեծ ազատութիւն անելով հասարակութեան վրա։ Լաւ էին նոյնպէս պ. Վրոյր Մոնտինէօրի դերում, տ. Զաբէլ Բօզալիայի դերում, տ. Արքաքեան Էմմայի դերում և պ. Բերոյեան Արբիդօ բժշկի դերում. քիչ թոյլ տարան վերջին գործողութիւններում պ. Մարիկեան գոն-Ֆերնանդոյի դերում բաւարար էր։ Խաղի ընդհանուր ազատութիւնը լաւ էր։ Դահլիճը կիսով չափ լիքն էր։

—

«Մշակի» երեկվայ համարում տպված էր Սարիղամիշից գրված մի լուր մի կնոջ ապտանութեան փորձի մասին։ Լուրի մէջ հաղորդված էր ի միջի այլոց, որ ապտանութեան շարժառիթն է եղել ամուսնական անհաւատարմութիւնը և որ իբր թէ կինը փախել է մի երիտասարդի հետ։ Այդ լուրի հրատարակութեան առիթով մեր խմբագրատուն մտաւ երէկ մի պարոն, որ յայտնեց, թէ լուրի մէջ այն բոլորը, ինչ որ վերագրված է սիրահարութեան, սխալ է և անհիմն, որ ոչ մի երիտասարդ սիրահարական նպատակով չէ փախցրել կնոջը և եթէ ամուսինների մէջ գոյութիւն ունեցել են անհամաձայնութիւններ, նրանց սկզբնապատճառը ընտանեկան թիւրիմացութիւնները և երկպառակութիւններն են եղել։ Ցայտնելով այդ բոլորը՝ պարոնը ցանկութիւն յայտնեց, որ լրատուն հանդէս գայ ասելի որոշ ցուցումներով, անունները տալով և ատորագրելով իր թղթակցութիւնը, որպէս զի բամբասանքներից և ենթադրութիւններից ազատ կացուցանվեն այն անձինք, որոնք որ և է պատճառով առընչութիւն են ունեցել նկարագրած դէպքի հետ։

—

ՂՈՒԲԱՑԻՑ մեզ գրում են. «Զէյվեցի Հալի-Նաբի-Աբդուլլա-օղլին, նեղվելով գողութիւնների և մարդասպանութիւնների մէջ, իշխանութիւնների հրամանով քանի մի տարի առաջ աքսորվում է Ռուսաստան։ Նրա կինը՝ Համզա-Սալթալի-զըզին, ազատ համարելով իրան, ամուսնանում է համդիզացի Բայրամ-Ալի-Գիւլ-Ալի-օղլու հետ։ Այդ բանը յայտնում են Հալի Նաբիին, որը աքսորի անդից գալիս, փոխվում է Ղուբայի գաւառը. այնտեղ նա մի քանի ամիս շարունակ գողութիւններ, յափշտակութիւններ, չարագործութիւններ է կատարում։ Ահա մի նմուշ նրա քաջագործութիւններից. բռնում է փերբէդիլցի փոքրահասակ Սուրխայ-Ահմէդ-Աղա-օղլուն, որը ուսանում է ռուսաց դպրոցում, ամնում, կապում է անասուն, լուր է ուղարկում նրա ծնողներին, որ հարիւր բուբլի փող ուղարկեն, որ-

դու ազատութեան համար, ապա թէ ոչ «բրանվածը» կը ապանի։ Ճարահատեալ Անմէդ-Ազան կատարում է աւազակի պահանջը, ուղարկելով Նարան հարիւր բուբլի, որից յետոյ բռնված ազատվում, սուն է գալիս Հաջի Նաբին, ինչպէս ասացի, կատարում է և ուրիշ պէս պէս չարագործութիւններ, բայց նրա գլխաւոր գործը և նպատակը լինում է այն, որ իր նախկին կնոջը խլէ ներկայ ամուսնուց, և այդ պատճառով հետամուտ է լինում Նրան։ Իմանալով, որ նա գտնվում է այդում, Հաջի-Նաբին՝ անցած սեպտեմբերի 26-ին, գնում, մրտնում է այդին, ուր գտնելով իր ուզածին, բռնում է Համդայի կոնից և քարշ է տալիս այդուց, որա հարայ-հրոցին վրա է հասնում ամուսինը Բայրամ-Ալին և այլեւայնները. սրանց աջողվում է բռնել աւազակին, բայց սա թեթև վերքեր է հասցնում Գիւլ-Խանումի երկու ձեռքերին։ Հաջի-Նաբին հիմա բանտարկված է քաղաքի բանտում։

—

ԳԵՕԿՉԱՅԻՑ մեզ գրում են. «Այս տարի խաղողի բերքը Գեօկչայի գաւառում միջակ է։ այդ պատճառով էլ գները բարձր են, 45 կոպէկից մինչև 55 կոպ., չը նայած, որ ուրիշ տարիներ առհասարակ լինում էր 38—46 կոպ.։ Սեպտեմբերի 10-ից սկսվում է օղեգործների և գինեգործների հաստանը, որոնք ունեն գործարաններ Գեօկչայում կամ գիւղերում։ Խաղողը գնում են այսպես կոչված ամեն մի գործարանատէր ունի իր մարդը «կոմիսիոնէր», որը և գնում է գիւղացիներից այնքան խաղող, որքան հարկաւոր է և ամեն մի գնած պուդին տալիս է վարձատրութիւն 8 կոպ.։ Խաղողը լաւ հասնելուց յետոյ գործարանատէրերը իրանց կոմիսիոնէրների հետ ժողովում են մէկի մօտ՝ գները նշանակելու և դա տևում է ամբողջ 3—4 օր։ Երկար գոռում-գոչումից յետոյ նշանակում են համաձայնդա։ Այսպէս գինեգործութիւնը այնքան զարգացած չէ, ինչպէս օղեգործութիւնը, բայց վերջին երկու տարում սկսել են ուշադրութիւն դարձնել նաև գինեգործութեան վրա, մանաւանդ յայտնի գործարանատէր Դ. Զ. Սարաջեվը, որն ունի գաւառում երկու կոնեակի գործարան և գինու մեծ պաշար է պատրաստում կոնեակ քաշելու համար։ Մի քանի ուրիշ գործարանատէրեր ևս խնդիրք են տուել ֆինանսների մինիստրութեան կոնեակի գործարան բանալու համար։ Օրէնքով կոնեակ քաշելը թոյլատրվում է նոյեմբերի 1-ից մինչև սեպտեմբերի 1-ը, ամբողջ 10 ամիս։ Օղի քաշելը արդէն սկսվել է։ Գաւառում կայ նաև մի էքսիֆիցիոնի գործարան, որը պատկանում է եղբ. Սեբէնձներին։ Գները ներկայումս հետևեալներն են։ Գինին վեդրոն սպիտակը 70—90 կ., իսկ կարմիրը 1 ր. 20 կ. մինչև 1 ր. 50 կ., իսկ օղին իւրաքանչիւր աստիճանը 11¼—11½ կոպէկ։

ԱՐՑԱԽԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՀԵՌԱՒՈՐ ԱՐԵՒԵԼՔՈՒՄ

Նապօլեական մամուլի կարծիքը. Գօրա-Արաւորում լոյս տեսնող «Новый Край» առաջ թերթը շարունակում է քաղուածօրէն առաջ բերել եւրոպական մամուլի կարծիքը Հեռաւոր Արևելքի ներկայ դրութեան և յատկապէս առաջ եւրոպական յարաբերութիւնների մասին։ —Նապօնիայի և Կօրէայի քաղաքական յարաբերութիւնները արդէն որոշված են, ասում է եւրոպական «Աստիչիմբում» թերթը, իսկ մեր և Ռուսաստանի յարաբերութիւնները դեռ անորոշ են և չափազանց լուրջ։ Ռուսաստանը չատ վաղուց է, որ աշխատում է իր գերակշռող ազդեցութեանը ենթարկել Մանջուրիային... Սակայն նրա գործունէութիւնը չարդարացրեց յոյսերը։ Մօտ ժամանակներս ֆինանսների մինիստր Վիտէն ճանապարհորդում էր Սիբիրում և պէտք է կարծել, որ նա հիասթափվեց երկրի դրութիւնը տեսնելով։ Մինչև այժմ Ռուսաստանը տկարագին գումարներ է ծախսում Դալնիյ և Պորտ Արթուր քաղաքները շինելու, և երկաթուղի անցկացնելու համար, բայց տակաւին ոչ մի օգուտ չէ տացել։ Իսկ մեր առևտուրը աւելի աջող, աւելի շահաւէտ ընթացք է ստացել։ Միայն Կօրէայի հետ ունեցած առևտրի ընդհանուր շրջանառութիւնը անցեալ տարվայ ընթացքում հասել է 1,100,000 ենին։ Բացի դրանից տարեցտարի բազմանում է եւրոպական ազդեցութիւնը Մանջուրիայում... Այժմ, երբ մեր զօրքի քանակը հասել է 400,000-ի, երբ նաւատորմը ուժեղացել է, հետաքրքիր է իմանալ, թէ մեր կառավարութիւնն ինչ դիրք է բռնելու, որպէս զի մեր վաճառականներն ապահովվի Կօրէայում և Մանջուրիայում և զարկ տայ արդիւնագործութեան զարգացմանը։...

Եւրոպական ուրիշ թերթեր աւելի կտրուկ կերպով են դնում հարցը և վճռականապէս ասում են, որ միայն պատերազմը կարող է լուծել Հեռաւոր Արևելքի խճճված հարցը։

—

Վտանգ չը կայ. Վերջին օրերի յուզիչ լուրերից յետոյ գերմանական «National Zeitung» թերթը աշխատում է հաստատելու իր ընթերցողներին, թէ Հեռաւոր Արևելքում պատերազմի վտանգ չը կայ, թէ եւրոպացիները Կօրէայի հետ կապած դաշնագրի հիման վրա իրաւունք ունեն դրաւելու Մազանպո քաղաքը։ Նապօնիայի այդ քայլը մի փոքր է fait accompli ունենալու և Տօկիոյում կատարվող քաղաքական բանակցութիւնների վրա ազդելու համար։

Բայց հաւատալ արդեօք։

—

Դեռ ոտս է ճաւատալ.—Անգլիական «Morning Post» լրագիրը, որ շարունակ յարձակողական յօդուածներ ու տեղեկութիւններ է տպում Ռուսաստանի դէմ, այժմ էլ ասում է, թէ դեռ չէ կարելի հաւատալ, որ պատերազմի վտանգն անցել է և իբրև ապացոյց առաջ է բերում այն փաստը, որ 90 նաւերից բաղկացած ռուսաց նաւատորմը իբր թէ նորերս դուրս է եկել Գօրա-Արթուրից, իր հետ վերցնելով չատ թնդանօթներ։

Դա պատերազմի նախագուշակ նշան է, եթէ ի հարկէ, ճիշտ է կատարված դէպքը։

ԻՆՉ Է ԿԱՏԱՐՎՈՒՄ ՄԱԿԵԴՈՆԻԱՅՈՒՄ

Թիւրք-յունական բարեկամութիւն.—Յոյն ժողովուրդը Մակեդոնիայում դեռ շարունակում իր սուր ընթացքը ապտամբների վերաբերմամբ, իսկ նրա հոգեբարկանութիւնը նոյն նենգամիտ վերմունքը հաստատում է քաղաքական ճանապարհով, Թիւրք կառավարութեանն տրած գիմումներով։ Ահա թէ այդ մասին ինչպիսի փաստեր է արձանագրում «Автономія» թերթը։

—Յոյները, ասում է նա, Կ. Գէորգամ ծիծաղի առարկայ են դարձել։ Նրանց ներկայացուցիչը՝ Գիպարիսը գրեթէ իւրաքանչիւր օր այցելում է Ելդրզ-Կիոսկը կամ Բ. Դուռը և կարդում է այնտեղ յունական հիւպատոսների զեկուցագրերը Մակեդոնիայից։ Այդ մի և նոյն ժամանակ աշխատում է համոզել Թիւրք կառավարութեանը՝ ոչնչացնել բոլգարական էկզարխութիւնը, որից յետոյ իբր թէ կը խաղաղվի երկիրը, կը վերանայ ապտամբութիւնը։ Այդպիսի պահանջները նոյն իսկ Թիւրքերի կողմից դժգոհութիւն են առաջացրել։ Թաքսիմ փաշան վերջին անգամ խիստ կերպով պատասխանել է, որ Յունաստանը արդէն կորցրել է իր չափը և Թիւրքիայի ներքին գործերին էլ է միջամտում, այն ինչ սուլթանը բոլորովին կարօտ չէ յունական խորհուրդներին։

Բայց այդ դեռ բոլորը չէ։ Գիպարիսը յունական պատրիարքի հետ միացած բողոքել է Հիլմի փաշայի նախագահութեամբ կազմված խառն մանաժողովի դէմ, որովհետև այդտեղ միայն մի յոյն է մտել։ Այդ բողոքով յոյները աշխատում են Թիւրք կառավարութեանն համոզել, թէ Մակեդոնիայում ազգաբնակութեան մեծամասնութիւնը յոյներն են և այդ պատճառով էլ մանաժողովի անդամների մեծամասնութիւնն էլ յոյներ պէտք է լինեն։

Այդ բողոքին մեծ վիշիրը պատասխանել է, որ այժմ Թիւրքական կառավարութիւնը զբաղված է խաղաղութիւնը վերականգնելու գործով և ոչ թէ ազգային կամ կրօնական հարցերով և հէնց այդ պատճառով նա անկարող է բաւարարութիւն տալ յունական ցանկութեանը։

Ահա այդ դրութեան մէջն է Թիւրք-յունական բարեկամութիւնը, որից այնքան բարիքներ էին ապասում յոյները։ Փաստերը ցոյց են տալիս, որ նոյն իսկ բանակալ Թիւրքիան արդէն զզուանքով է նայում յոյների քծնանքի և նենգութեան վրա։

—

Ռուսահպատակը բանտարկված.—Ինչպէս յայտնի է Թիւրքիայում վաղուց արդէն վերացել է կնանքի ու գոյքի ապտոմութիւնը և այդ դառն ճշմարտութիւնը իրանց կաշուի վրա փորձել և դեռ փորձում են ոչ միայն Թիւրքահպատակները, այլ և օտարահպատակները։ Այդ մասին մի նոր փաստ է յիշում Վիէննայի «Zeit» լրագիրը։

—Սեպտեմբերի 30-ին, ասում է այդ թերթը, լրտեսների և գաղտնի ոստիկանութեան գլխաւոր Ֆէիմի փաշան իր մարդկանցով մտնում է Կ. Գալաթի «Թոհաբեանց» օրճարանը և ձերբակալում ռուսահպատակ Լադգիկովին, որը պատկանում է հասարակական բարձր խաւերին։ Սրճարանում սարսափ է տիրում։ Լադգիկովը դիմադրում է Ֆէիմի փաշայի մարդկանց և մի և նոյն ժամանակ խնդրում է ազատ թողնել։ Այդտեղ գտնվող եւրոպացիները օգնութեան են հասնում և այդ միջոցին Լադգիկովը իր մօտի արժէքաւոր իրերը յանձնում է ուրիշներին։ Դրանից յետոյ, նրան նորից ձերբակալում են և արքունիք տանում, ուշադրութիւն չը դարձնելով բողոքների վրա և անհնարանք թողնելով ռուսաց հիւպատոսարան տանելու պահանջը։

Այդ միջնադէպը, յիշեալ լրագրի ասելով, մեծ հետաքրքրութիւն է զարթեցրել և ամենքը անհամբեր սպասում են, թէ ինչ է անելու այդ մասին ռուսաց հիւպատոսարանը։

—

Դաւադրութիւն սուլթանի դեմ.—Սուլթան Աբդուլ Համիդը այնքան զզուում է իր կեանքի համար, այնքան կասկածում և վախենում, որ արքունիքում կամ նրա շրջակայքում կատարված ամեն մի նոր երևոյթ նրա աչքում մեծ ուշադրութեան առարկայ է դառնում և դաւադրութեան կասկածներ պարթեցնում։ Քանի, քանի անգամ այդպիսի պատրուակներով բանտարկվել ու աքսորվել են առանձնակաւոր մարդիկ։ Քանի անքուն օրեր ու գիշերներ է անցրել սուլթանը այդպիսի կասկածների պատճառով։

—«Ահա մի այդպիսի կասկածն էր պատճառը, ասում է «Hart. Zeit.» լրագիրը, որ մօտ օրերս Ելդրզ-Քիոսկում ձերբակալեցին 20 օֆիցէրների և աքսոր ուղարկեցին։ Սակայն դեռ աքսորավայր չը հասցրած դրանց բոլորին էլ կոտորեցին։

ՆԱՄԱԿ ԳԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

Սարպուսար, սեպտեմբերի 28-ին

Ամսոյս 12-ին առաւօտեան ժամը 4-ին ատաթիկ երկրաշարժից աւերված է Խորասանի Թուրշիզ յայտնի պտղաւէտ գաւառը։ Երէկվայ տարեհանդակը շատ քիչ տեղեկութիւններ է հաղորդում այս մասին։ Սոսկալի աղէտը տեղացիների կոյտ է դարձել Սուլթանաբադ գաւառական քաղաքը։ տների մեծամասնութիւնը քանդված են, կանգուն մնացածները անպէտք են բոլորովին բնակութեան համար։ կան բազմաթիւ մարդկային զոհեր, առ այժմ փլատակների տակից դուրս են հանված 360 դիակներ։ Համեմատաբար երկրաշարժը թեթև է անցել գիւղերում, մնասելով և բնակութեան համար անպէտք դարձնելով տները։ Երկրաշարժի ցնցումները շարունակվում են, ասրատփոխար, անօգնական ազգաբնակութիւնը ապրում է վրանների տակ։

Ճիշտ տեղեկութիւններ պակասում են, զոհերի ստոյգ թիւը յայտնի չէ։ Սպասում ենք ուրիշ նոր տեղեկութիւններ իմանալու։ պօռտային կամ հեռագրական հաղորդակցութիւն չկայ։

Մ. Ե.

ԱՐՑԱԽԻՆ ԼՈՒՐԵՐ

—Զը նայելով այն հանգամանքին, որ ենդլիական պահպանողական մինիստրութիւնը չէ էլ մտածում հրաժարական տալու մասին, ազգաբնակութեան մամուլի մէջ արդէն երևում են ազգաբնակութեան մինիստրութեան ապագայ անդամների ցուցակները։ Այդ ցուցակների ընտրող յատկանիշը կայանում է նրանում, որ ապագայ մինիստրների թւում նշանակվում են ոչ միայն արմատականներ, այլ և ներկայացուցիչներ բանւորական կուսակցութեան կողմից, որովհետև,—ինչպէս ասում է այդպիսի ցուցակներ կազմողներից մէկը,—ազգաբնակութիւնը Անգլիայում ապագայ կարող է ունենալ միայն այն ժամանակ, երբ նա դաշն կը կապէ բանւորական կուսակցութեան հետ։ Ահա այդպիսի ցուցակներից մէկը.—Առաջին մինիստր և գանձարանի առաջին լորդ-կոմս Սպէնսէր, նախագահ գաղտնի խորհրդի—Կէմբրէլ-Բաննէրման, արտաքին գործերի մինիստր—լորդ Ռոզբէրի, գաղթականութիւնների մինիստր—սէր Էդուարդ Գրէյ, ներքին գործերի—Լլոյդ জորջ, զինուորական—জարլզ Դիլկ, իրաւանդական գործերի—Հէրբէրտ Գլադստան, ժողովրդական լուսաւորութեան — պրոֆէսոր Բրայս, հրապարակական աշխատանքների—জոն Թէօրնս (բանւորական պագամաւոր)։ জոն Մորլէյին տրվում է մինիստրութեան մէջ լանկաստերեան դաշնութեան կանցլերի համեստ դերը, որպէս զի նա ատիված չը լինի Թողնել իր գրական աշխատութիւնները։

—«Liverpool Daily Post» լրագիրը հաղորդում է, որ Զէմբէրլէնի ֆինանսական ծրագիրները տարաձայնութիւններ են ծագեցրել նոյն իսկ անգլիական տրքայական ընտանիքի մէջ։ Այսպէս Էդուարդ Թագաւորը ջերմ կողմնակից է ազատ առևտրի, իսկ Թագաժառանգը՝ Ուէլսեան արքայազնը պաշտպանում է Զէմբէրլէնի պրոտէկցիոնիստական ծրագիրները։

—Գարիգի լրագիրների միաձայն վկայութեամբ, իտալական տրքայական զոյգի ընդունելութիւնը Ֆրանսիայի մայրաքաղաքում չատ օրատագին ընաւորութիւն ունէր։ Ամբոխը խուռն բազմութեամբ լցրել էր այն փողոցները, որոնցով պէտք է անցնէին նախագահ Լուբէն և իտալական թագաւորն ու թագուհին։ Կարելի է ասել, որ այս ընդունելութեան ժամանակ դիմաւորող ժողովրդի բազմութիւնը կրկնակի աւելի էր, քան Էդուարդ Թագաւորի ընդունելութեան ժամանակ։ Ժողովուրդը դիմաւորում էր հիւրերին ոգեորված աղաղակներով, աղամարդիկ՝ ատատանում էին գլխարկները, իսկ կանայք թաշկինակները։ Թագուհին չատ դուրեկաւ կանանց, որոնք բացականչում էին յաճախ, «ինչ գեղեցիկ է»։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՍ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

8 հոկտեմբերի

Կ. ՊՕԼԻՍ։ Բանակցութիւնները Ելդրզ-Քիոսկի և Նաչելիչի մէջ դադարեցին։

ՄՈՍԿՎԱ։ Բեռազանեան երկաթուղու Բիրիլյովո կայարանում յայտնվեց, որ կողոպտված էր ապրանքաբեռ-մարդատար գնացքի մէկ վագոն։ Գնացքի ժամանակ գողերը կոտրել են դուռը և գողացել երկու կապոց հիւսուած ապրանքներ, երկու հակ մանուֆակտուրային ապրանքներ և ուրիշ արկղ թէյ։

ՊԱՐԻԶ։ Ֆրանսո-անգլիական համաձայնութիւնը միջնորդ դատարանի մասին դեռ առաջին քայլն է միայն։ Պատրաստվում են էլի չատ այդպիսի համաձայնութիւններ Իտալիայի, Հոլանդիայի, Շվեդիայի և Նորվեգիայի հետ։ Ֆրանսո-իտալական պայմանագիրը կը հրատարակվի Լուբէի ճանապարհորդութիւնից յետոյ դէպի Հռոմ, իսկ միւսները կը ստորագրվեն շուտով։

Կ. ՊՕԼԻՍ։ Ասում է այն տեղեկութիւնը, թէ իբր անգլիական դեսպանը ներկայացրել է Բ. Դրանը մի յայտագիր, որով պահանջում է իրագործել Բեր ինի դաշնագրի Մակեդոնիային վերաբերեալ որոշումները, նաև այն լուրը, թէ իբր այդ պահանջը պաշտպանութիւն է գտել իտալական կառավարութեան կողմից։ Արդէն մի քանի օր է, որ ոչ Բարձրագոյն Դուռը և ոչ գեսպանութիւնները չեն տացել տեղեկութիւններ հրոտակոխմբերի դէմ մղած մեծ մարտերի մասին։

ՊԵՏԵՐԲՈՒԳ։ Թագուհի Կայսրուհի Մարիա Ֆէոդորովնան բարեհաճեց հրամայել՝ յայտնել գեներալ Բոգդանովիչին անկեղծ շնորհակալութիւն նրա հրատարակած ու մատուցած այն պատկերների համար, որ յիշեցնում է Թագուհուն Կայսերական Ընտանիքի Սարովում անցկացրած անմոռանալի փայլուն օրերը։

9 հոկտեմբերի

ՍԻՄՖԵՐՕՊՕԼ։ Նահանգապետը միջնորդութիւն է յարուցել Բերդեանսկում տեւարական դպրոց բանալու մասին։

ՀՌՕՄ։ Մինիստրների այսօրվայ խորհրդում Ցանարդելլին հաղորդեց, որ նա Թագաւորից խնդրել է արձակել իրան մինիստր նախագահի պաշտօնից։ Նրա առողջութեան անբաւականաչի պահանջները ստիպել են հրաժարական տալ։ Միւս մինիստրներն էլ միաձայն վճռեցին հրաժարական տալ։

ԶՈՒՅՏԱ։ Սկսվեցին հողային աշխատանքները երկաթուղին Սրեանից մինչև Զուլֆա շարունակելու համար։

ԶԻԲՈՒԹԻ։ Լուրեր են պտտում, թէ Նեղուս Մենելիկ Սպիտակ Նեղոսի անգլիական ամրանոցները պատռված միջնադէպի պատճառով հրաման արձակեց ընդհանուր մոբիլիզացիայի մասին։

ՀՌՕՄ. Եւրոպական միտքն հերքում է այն լուրը, թէ եւրոպական օֆիցէրները յետ են կանչված Տուրինի ճեմարանից և յայտնում է, որ Ռուսաստանի և Նապօնիայի միջև գոյութիւն ունեցող տարաձայնութիւնները կը լուծվեն քաղաքագիտական ճանապարհով։

Խմբագիր՝ ԱԼԵՔՍԱՆԴՐ ԲԱԼԱՆԹԱՐ

Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ

ԻՍԱՀԱԿ ՄԵԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՑԱՑՑԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

Բ. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆԻ

(Կուկիա, Վօրոնցովի արձանի հանդէպ)

ԱՄԵՆ օր բացի կիրակի օրերից.

ԱՌԱՒՕՏՅՆԵՐԸ

Բ. Ա. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան վեներական (սիֆիլիս) և մկղատեռ. հիւանդ.

ՁԻՆՕՎՆԻ—9—10 ժ. աչքի, ներքին և նեարդային։

Մ. Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆՑ—10—11 ժ. մորթու, վեներական և վիրաբուժութիւն։

Զ. Ի. ԲԱԲԱՆԱՄՍԵԱՆՑ—11—12 ժ. մանկաբարձութեան կանանց և երեխայոց հ.

Ռ. Ի. ԳՋԵԼԻԵՎ—12—1 ժ. ականջի, քթի և կոկորդի հ.

Գ. Ա. ԹԱՐԽԱՆԵԱՆՑ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ. երկուշ. չորեք. ուրբաթ։

Ա. Գ. ԳԱԲԱԵՎՍԿԱՅ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ. երեքշ. հինգշ. շաբաթ։

ԵՐԵԿՈՅԱՆՆԵՐԸ

Ն. Ն. ԹՈՍՈՒՆՅԱՆՑ—5—6 ժ. վիրաբուժ. մորթու և վեներական հ.

Գ. Ս. ԼԵՎԻ—6—7 ժ. նեարդային (էլեկտրաբուժութիւն), ներքին և վեներական հ.

ԿՈՆ-ԹԻՒՇ ՇԵՐՄԱՆԵԱՆ—7—7½ ժ. մանկաբարձութեան և կանանց հ.։

Գ. Ա. ԹԱՐԽԱՆԵԱՆ—7½—8 ժ.

Բ. Ա. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ—7½—8 ժ.

Վճարը 50 կ. չքաւորները ձրի։ Հանախորդի (Լիկոնսիլիումի) և օգնութեան համար առանձին։

Ց. Ց. ԱԶՎԱՆՏՅԱՆ—տանը. ծոցեհատ և բժշկական մարքատարդ. գիմել 11—1 ժ.։

Հիանգանոցի վերատեսուչ՝

բժշկապետ ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ

ՕԼԻՕԳՐԱՖ ՊԱՏԿԵՐ

ՄԱՍԻՍԻ ԵՒ Ս. ԷՋՄԻԱԾՆԱՑ ՎԱՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՍԱՐԱՆԸ

Ս. ԷՋՄԻԱԾՆԻ 1600 ԱՄԵԱԿԻ ԱՌԹԻՒ

Ամեն մի ճշմարիտ հայու սրտի մօտիկ նուիրական ս. տեղւոյ այս գեղեցիկ մեծադիր նկարը՝ 75 սանթիմ. մեծութեամբ, և 12 գոյնով իսնամոք պատրաստված է, և վաճառվում է հատը 2 ր. ճանապարհածախսով 2 ր. 18 կ.։

Ցանկացողները կը դիմեն Армавиръ (Куб. Обл.) լուսանկար Մ. Փափազեանին։ Իսկ Ростовъ На-Дону, Владикавказъ и Армавиръ Бр. Гурджіева. 3—5

Վլադիկավկազում նոր բացված

Ս. Ց. ՂԱԶԱՐԵԱՆԻ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑՆ

ընդունում և վաճառում է ամեն տեսակ հայերէն գրքեր և հրատարակութիւններ։ Հասցէն՝ Владикавказъ. Книжный магазинъ С. І. Казарова. 7—10

ԹԻՖԼԻՍԻ ԲԱՂԱՔԱՑԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ հաղորդում է ի տեղեկութիւն ամենքի, որ կենսաբոնական բուժարանին կից (Մուխրանսկայա փողոց) մանկաբարձուհիների փոխադարձ օգնութեան Թիֆլիսի ընկերութեան կողմից հիմնված է մանկաբարձուհիների ցերեկվայ և գիշերվայ հերթապահութիւն՝ առաջին օգնութիւնը հատցնելու ծննդկան և յղի կանանց։ Խորհրդի և նախնական օգնութեան համար վերցնվում է 1 ռուբլի վճար։ Այս դրամները մանում են յիշված ընկերութեան գրամարկղը, որ նոյնպիսի հերթապահութիւն է սահմանել և մանկաբարձական ինստիտուտում։

2—3

ԹԻՖԼԻՍԻ ԺՈՂՈՎԱՐԱՆ

Շաբաթ, հոկտեմբերի 18-ին, նշանակված է անդամների

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ՝

քուէարկելու այն անձերին, որոնք առաջարկված են որպէս անդամի թեկնածու և քննելու մի քանի ընթացիկ հարցեր

2—3

Իմ աշխատութեամբ լոյս են տեսել հետևեալ

ԿՐՕՆԻ ԴԱՍԱԳՐՔԵՐԸ

Առանձնաց համար.

1. Դատաստան կրօնի ա. տարի		. —	25
2. » » բ. »		. —	20
3. » » գ. »		. —	30
4. Հին-ուխտ	գ. »	. —	85
5. Նոր-ուխտ	ե. »	. —	40
6. Գործք առաքելոց	զ. »	. —	40

Ուսուցչաց համար.

7. Ուղեցոյց կրօնի—Հին-ուխտի (սպա.)	—	—
8. » » —Նոր-ուխտի .	2—	5
9. Ուսումն քրիստոնէական կրօնի Դ. հ.	1—	50
10. » » » Ե. »	—	50

Ինձ դիմողներն ստանում են 1. 6 տարիների համար 25%. 2, 3, 4, 5 տարիների համար 20%, իսկ 7, 8, 9, 10 տարիների համար 35% զեղչ։

Կարելի է դիմել—1) ինձ (Коммерческое училище), 2) Центральная книжная торговля 4 3) Книжный магазинъ „Гуттенбергъ“.

21—100 Սահակ քահ. Սահակեանց

ԹԻՖԼԻՍԻ ԱՐՔՈՒՆԱԿԱՆ ԹԱՏՐՈՆ

ՌՈՒՍԱՑ ՕՊԵՐԱ

Հինգշաբթի, հոկտեմբերի 9-ին

կը ներկայացվի

ՀՈՒԳԵՆՕՏՆԵՐ

Օպերա 4 գործ. երաժշտ. Մեյերբէրի։

Մասնակցում են.—Տ.տ. Գոլցինա, Կարտավինա, Կարբի, Լեվինա, Սկօրուպսկայա, Տրօինիցկայա։ Պ.պ. Դարսկի, Իլիուշչենկո, Նովլաթով, Շմակով, Կիւզնէր, Սանգուրսկի, Ֆեդօրով, Գրինով, Գավրիլով։

Սկիզբը երեկոյեան 8 ժամին։

Ապր. Վաղը, շաբաթ, հոկտեմբերի 11-ին, 3-րդ գալա-ներկայացում. կը ներկայացվի Նորին Մեծութեան օպերատ Ֆիդնէրի մասնակցութեամբ «Օպրիչնիկ» կիրակի, հոկտեմբերի 12-ին, «Գայացներ» II «Գիւղական հարսանիք» Պատրաստվում է ներկայացման համար առաջին անգամ Թիֆլիսում «Ծրանչեսկա դա Ռիմինի» օպերա 4 գործ. երաժշտ. Նապրաւնիկի։

1—1

ՀՐԱՒԷՐ

Հոկտեմբերի 12-ին, կիրակի առաւօտեան ժամը 11-ին Բէդրենէմի ս. Աստուածածնի եկեղեցում ժողով է լինելու նոր երէցփոխ ընտրելու, ուստի արտօրով մեծապատիւ պ.պ. ծխերն վերջին անգամ հրաւիրվում են ներկայ լինել յիշեալ եկեղեցւոյ ընտրութեանը մասնակցելու։

Գործակալ Ա մասին Թիֆլիսի՝

Գրիգոր աւագ քահանայ Մանդակունի

1—2

ԱԿՆԱԲՈՑԺ

Յ. ՏԻՐԱԴԱԻԹԵԱՆ

Ընդունելութիւնը ամեն օր

Առաւօտեան ժամի 9-ից մինչև 12

Երեկոյեան » 5-ից մինչև 6

Մատաթեան փ. Արովեանցի ս. № 11 Ալեքսանդրեան այգու դիմաց։ 9—25

Լոյս տեսաւ

Հ. ՀԱՄԲԱՐՁՈՒՄԵԱՆԻ

ԱՐԵԱՆ ԷՋԵՐ

Բանաստեղծութիւնները

Դիմել Թիֆլիս հայ գրավաճառներին։

1—3

ԲԺՇԿԱԳԵՏ

Տ. ԳԷՈՐԳ-ԲԷԳԵԱՆ.

ԱԶԳԻ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐ

Ընդունելութիւն ամեն օր.

Առաւօտեան ժամի 9-ից մինչև 12

Երեկոյեան » 5-ից մինչև 7

Վելիամինովսկայա փ. № 16, տուն Եղիազարեանի։

24—100

Կ. ԿԷՕՆՃԵԱՆ

Շարունակում է հիւանդների ընդունելութիւնը։ Բժշկում և լքցնում է հիւանդ առաջեր, մինում է՝ անդամահատված ծնօտների պրոթեզներ (резекціонные протезы), արուեստական առամներ, քիթ և քիմք։

Ընդունում է առաւօտեան 9—2 ժ.

Երեկոյեան 5—8 ժ.

Հասցէն՝ Երևանեան հրապարակ, ս. Գուրգենովի, Эриванская пл. д. № 2, надъ аптек. магаз. Кавк. Тов.

(ց. ռ. կ.) 13—20

ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ԲՐՕԿԱՐ ԵՒ ԸՆԿ.

յանձնարարում է

ԻՐ ՑԱՏԿՈՒԹԵԱՄԲ ՑԱՑՏԻ

ԳԼԻՑԵՐԻՆԻ ՍԱՊՕՆ

Պահպանում է կաշուի փափկութիւնը

և աւելցնում է սպիտակութիւնը

ԿՏՈՐԸ 20 ԿՈՊԿ

3—10 143,186

(Метцль). (ա. ամ. 10)

ՄԱՆԿԱԲԱՐՁՈՒՀԻ

ՍՕՓԻԱ ԶԱՔԱՐԵԱՆ ԽԻԶԱՆԵԱՆ

Վերադառնալով ամարանոցից, ընդունում է հիւանդներին 3—5 ժամը, Վելիամինովսկայա, № 16։ 8—10

Լոյս տեսաւ

ԲԺԻՇԿ-ՈՒՍԱՆՈՂ ԳԷՈՐԳ ՄԱՂԱԲԵԱՆԻ

ՄԱՅՐ ԵՒ ՈՐԴԻ

Գինն է 40 կոպ.

Դիմել Тифлисъ, книж. магазинъ Гуттенбергъ կամ Армянск. баз. Гостинн. дворъ Манташева, М. Магакяну.

Գումարով առնողներին առանձին զիջում կը լինի։ 3—10

ԲԺԻՇԿ

Ա. ՄԽԻԹԱՐԵԱՆՑ

Ընդունում է մանաւորապէս սիֆիլիս, մորթու և վեներական ախտ ունեցող հիւանդներին։

Քիմիկո-միկրոսկոպիական կաբինէտ։

Ամենայն օր Առաւօտ. 12—2 ժ.

Երեկոները 5—6 ժ.

Մեծ Վանքի փողոց, տուն Կուզանովի. № 20. Բախչիեվի դեղատան կից. Большая Ванкская ул. домъ Кузанова, № 20, рядомъ съ аптекой Бахчіева. 15—100

ԲԺԻՇԿ

Ա. ՔԱԹԱՆԵԱՆ

ՆԵՐՔԻՆ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐ ունեցողներին

Ընդունում է 9—11 ժ. առաւօտը

և 5—7 ժ. երեկոյեան։

Վելիամինովսկայա փողոց, տ. Սաֆարովի. № 18. 9—10

Լոյս տեսաւ

Մ. ԳՕՐԿԻՑ

„ՄԱԿԱՐ ՁՈՒԴՐԱ“

Թարգմ. Սիմ. Բաբիեան

ԳԻՆՆ է 10 ԿՈՊ.

Դիմել հրատարակչին՝ Армянскъ (Таврич. губ.), Ивану Давидову և պ. Գալստեանին՝ Тифлисъ, Книжный магазинъ „Гуттенбергъ.“ 5—5

ԵՐԴՈՒՆԱԼ ՀԱՒԱՏԱՐՄԱՏԱՐ-ՓԱՍՏԱԲԱՆ

Երուանդ Զալալեան

Ցանձն է առնում պաշտպանելու քրէական (ուղղութիւն) և քաղաքացիական գործերը։ Արտիլերիյսկայա փողոց, № 11, Կաղնեակի Կօրպուսի մօտ։ 3—3

Մի ճեմարանական

երիտասարդ որոնում է հայոց լեզուի դասեր։ Հարցնել «Մշակի» խմբագրատանը։

2—5

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ „ԴԱԳԷՔԱԳԱ“

Ծովային, գետային եւ ցամաքային ապահովագրութեան, ապրանքների տեղափոխութեան եւ գոյքերը կրակից ապահովագրելու համար։

ՀԻՄՆՎԱԾ է 1847 ԹՒԻՆ

Հիմնական դրամագլուխը	1,650,000	ռուբլի
Զահեստի դրամագլուխը	2,664,808	»

I. ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՏԵՂԱՓՈԽՈՒԹԻՒՆ.

Ամբի քան 800 գործակալութիւններ եւրոպական Ռուսաստանի, Կովկասի, Միջին Ասիայի, Սիբիրի եւ հեռաւոր Արեւելքի բոլոր նշանաւոր տեղերում, նոյնպէս եւ ներքին տրանսիտների պլատաւոր քաղաքներում։

Տեղափոխութիւն ամեն տեսակ բեռների եւ իրերի, որոնց ընդունելութիւնը եւ յանձնումը կատարվում է թէ տանը եւ թէ պահեստներում եւ խանութներում։

Ցանձնումն բեռների ուղարկողների կողմից առաջարկված պայմաններով (վերադիր լիարներ ի հայիւ ուղարկողների, դրամի փոխադրութիւն (переводъ) բեռները յանձնելու տեղը հասցնելու համար եւ այլն)։

Պահպանութիւն բեռների որոշեալ պայմաններով տացման տեղերում՝ ապահովագրեալ նրանց պահեստներում, որի համար չատ էլեւորում կան ընդարձակ պահեստներ, յատկապէս բեռներ պահելու համար։

II. ՆԱԻԱԳՆԱՑՈՒԹԻՒՆ

Սեփական մարդատար, ապրանքատար եւ ձգող շոգենաւեր, ծովային եւ գետային նաւեր (70 նաւ)։

Բեռնատիպ եւ մարդատար նաւերի պարբերական հաղորդակցութիւն Վոլգա գետի բոլոր նաւամատոյցների մէջ, Բիրիսիից մինչեւ Աստրախան եւ Կասպից ծովի բոլոր նաւամատոյցների մէջ, Աստրախանից մինչեւ Պարսկաստանի ափերը։

Ամենաընդարձակ պահեստներ Նիժնիում (սիբիրեան նաւամատոյցի վրա), Աստրախանում, Բաքւում եւ Կրասնովոդսկում։

Բեռները անընդհատապէս ուղարկելու համար ընկերութեան շոգենաւագնացութիւնը համատեղութիւն է կապել երկաթուղիների հետ։ Այն ապրանքների տեղափոխութեան համար, որոնք ուղարկվում են Ռուսաստանից Պարսկաստան եւ Պարսկաստանից Ռուսաստան, գոյութիւն ունի առանձին, բացառիկ արտօնութիւնների համաձայնութիւն Պարսկական պետական եւ տեղափոխութեան ընկերութեան հետ։

III. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ.

ա) Ապահովագրութիւն բեռների, որոնք տեղափոխվում են թէ ցամաքային եւ թէ ջրային ճանապարհներով (ծովերով և գետերով)։

բ) Ապահովագրութիւն կրակից ամեն տեսակ գոյքերի։

գ) Ապահովագրութիւն ամեն տեսակ գիշերային դէպքերից ճանապարհին ամեն տեսակ նաւերի, շոգենաւերի, առագաստանաւերի, վագոնների և վագոն-ցիստերնների։

դ) Ապահովագրութիւն թանկագին իրերի և արժէքաւոր լիքերի, որոնք ուղարկվում են պատով, ցամաքային և ծովային ճանապարհներով, համաշխարհային պատային գաղնակցութեան բոլոր կէտերի մէջ։

Ապահովագրութիւններ ընդունվում են ինչպէս վարչութեան, այնպէս էլ ամեն տեղ ընկերութեան բոլոր գործակալութիւնների մէջ։

Ինչի տեղափոխութեամբ պարապող գործակալութիւններից, կրակից ապահովագրելու գործերով մասնաւորապէս զբաղվում են էլի ուրիշ 350 գործակալութիւններ։

Ս. Պետերբուրգի հասցէն ընկերութեան վարչութիւնը գտնվում է Ս. Պետերբուրգում, Գրիբոյեդովի պրոսպեկտի վրա, № 10-բորդ տանը։

Կիսագրեալ—Ծովային շոգենաւագնացութեան համար՝ Ռուսում, գետային շոգենաւագնացութեան համար՝ Նիժնի-Նովգորոդում։

Դիմելիք գործակալութիւնը—Վլադիկավկազ փողոցի վրա, վրաց ազնուականների տանը։ Տելեֆոն № 106

120—120

(ց. ռ. կ.)

ԳԱՐԻՃԻ ԳԵՂԱԳՈՐԾԻ

ՍԱՆՏԱԼ ՄԻԴԻ

ԹՈՒՅԼՔ ՏՐՎԱԾ ՌՈՒՍԱՍՏԱՆՈՒՄ

Այս կապսիւլների մէջ պարունակված զուտ սանտալի էսենցիան բժիշկները խորհուրդ են տալիս գործածել անարէի (գաղտնի հիւանդութիւնների) դէմ, կապայ-բալզամի և կուբեբայի փոխարէն։ Նա ներգործում է աւելի արագ, չէ յոգնեցնում ստամոքսը, ոչ մի հոտ չէ պատճառում և ոչնչացնում է փխրումն ու կլտիկը։

Կեղծիքներից խուսափելու համար պահանջեցէք, որ իւրաքանչիւր կապսիւլի վրա սանտալով գրոշմված կնիքը։

Գտնվում Ռուսաստանի գլխաւոր դեղատներում

SANTAL MIDY

(5, 10, 15, 20 և 25) 42—60

Дозволено Цензурою. Тифлисъ, 9 Октября 1908 г.

Электропечатня Груз. Изд. Т—ва, Б. Вельяминовская 14.